# ԻԲՈՒՖԵՆ

**Բժշկական կիրառման հրահանգ**
**(տեղեկատվություն բուժվողների համար)**
**ԻԲՈՒՖԵՆ**
**ներքին ընդունման դեղակախույթ, 100մլ**

## ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԱՆՎԱՆՈՒՄ
ԻԲՈՒՖԵՆ

## ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ՀԱՄԱՐ
7803

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉՊԱՏԵՆՏԱՎՈՐՎԱԾ ԱՆՎԱՆՈՒՄ
իբուպրոֆեն

## ԲԱՂԱԴՐՈՒԹՅՈՒՆ
Յուրաքանչյուր 5մլ պարունակում է 100 մգ իբուպրոֆեն ազդող նյութ:
Օժանդակ նյութեր՝ պրոպիլեն գլիկոլ, մեթիլպարաբեն (E218), պրոպիլպարաբեն (E216), սանսեթ դեղին (E110), նարնջի համային հավելում, հեղուկ սորբիտ, սախարոզ:

## ԴԵՂԱՁԵՎ
Ներքին ընդունման մանկական դեղակախույթ՝ նարնջի համով:

## ԴԵՂԱԲԱՆԱԿԱՆ ԽՈՒՄԲ
Ոչ ստերոիդային հակաբորբոքային դեղեր
ԱԲՔ ծածկագիր՝ M01AE01:

## ԴԵՂԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Իբուֆենը ոչ ստերոիդային հակաբորբոքային դեղ է, որն օժտված է ցավազրկող, հակաբորբոքային և ջերմիջեցնող ազդեցությամբ: Ներքին ընդունումից հետո 1-2 ժամ անց ուղղակիորեն ներծծվում է ստամոքսաղիքային համակարգից և արագ արտազատվում մեզով: Դեղի ազդեցությունը պահպանվում է մինչև 8 ժամ:

## ՑՈՒՑՈՒՄՆԵՐ
Իբուֆեն դեղակախույթը ցուցված է կիրառել 6 ամսականից 12 տարեկան երեխաներին, իսկ 3-6 ամսական երեխաներին՝ միայն բժշկի ցուցումով՝ հաշվի առնելով երեխայի մարմնի քաշը՝ 5 կգ-ից ոչ պակաս:
- որպես ջերմիջեցնող՝ սուր շնչառական հիվանդությունների, գրիպի, մանկական վարակների ժամանակ, հետպատվաստումային շրջանում և տարբեր հիվանդությունների ժամանակ, որոնք ուղեկցվում են ջերմության բարձրացումով,
- որպես ցավազրկող՝ թույլ և չափավոր ցավի ժամանակ, օր.՝ ատամների ծկլթում, գլխացավ, ատամնացավ, ականջացավ, կոկորդի ցավ, տարբեր տիպի տրավմատիկ և հետվիրահատական շրջանի ցավեր, նևրալգիաներ և միգրեն,
- որպես հակաբորբոքային՝ յուվենիլ ռևմատոիդային հոդաբորբ, ոսկրահոդաբորբ, ջլաբորբ, տենդովագինիտ:

## ՀԱԿԱՑՈՒՑՈՒՄՆԵՐ
- Մինչև 3 ամսական փոքրիկներ
- Նախկինում իբուպրոֆենի և այլ ոչ ստերոիդային հակաբորբոքային դեղերի հանդեպ ունեցած զգայնություն
- Բրոնխիալ ասթմա, եղնջացան
- Երեխայի մոտ ստամոքսաղիքային համակարգի խոցային ախտահարման դեպքում
- Ստամոքսաղիքային համակարգի արյունահոսություն
- Աղիների բորբոքային հիվանդություններ
- Արյան հիվանդություններ՝ լեյկոպենիա, հեմոֆիլիա
- Լյարդային կամ երիկամային անբավարարություն

## ԿՈՂՄՆԱԿԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Դեղորայքի օգտագործման ժամանակ հնարավոր են հետևյալ կողմնակի երևույթները.
- ստամոքսաղիքային համակարգի կողմից՝ սրտխառնոց, փսխում, ախորժակի բացակայություն, փորլուծություն, դիսպեպտիկ երևույթներ, պեպտիկ խոց, հազվադեպ հնարավոր է ստամոքսաղիքային արյունահոսություն,
- ալերգիկ ռեակցիաներ՝ մաշկային ցանավորում, քոր, եղնջացան, բրոնխիալ ասթմայի սրացում, բրոնխոսպազմ, անաֆիլակտիկ ռեակցիաներ, հազվադեպ ծայրամասային այտուց,
- սիրտ-անոթային համակարգի կողմից՝ զարկերակային ճնշման բարձրացում, սրտխփոց,
- նյարդային համակարգի կողմից՝ գլխապտույտ, գլխացավ, գրգռվածություն,
- արյան պատկեր՝ նեյտրոպենիա, թրոմբոցիտոպենիա, ագրանուլոցիտոզ, ապլաստիկ անեմիա:

## ԴԵՂԱՅԻՆ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ
Իբուֆենը չպետք է կիրառվի սուլֆամիդների, լիթիումի պատրաստուկների և մեթոտրեքսատի համակցությամբ:
Իբուֆենը բարձրացնում է պլազմայում դիգօքսինի խտությունը:
Իբուֆենը նվազեցնում է հակագերճնշումային դեղերի և միզամուղների ազդեցությունը: Միզամուղները և ցիկլոսպորինները կարող են մեծացնել ոչ ստերոիդային հակաբորբոքային դեղերի նեֆրոտոքսիկության ռիսկը: Իբուֆենն ուժեղացնում է միներալոկորտիկոստերոիդների և գլյուկոկորտիկոստերոիդների կողմնակի երևույթները:
Իբուֆենն ուժեղացնում է ներքին ընդունման հակամակարդիչների և հեպարինի ազդեցությունները:

## ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄՆԵՐ
Մինչ Իբուֆենի օգտագործելը ցանկալի է խորհրդակցել բժշկի հետ, եթե երեխայի մոտ առկա են.
- Եղնջացան անամնեզում
- Բրոնխիալ ասթմա
- Ստամոքսաղիքային հիվանդություններ
- Արյան բաղադրության շեղումներ
- Զարկերակային հիպերտենզիա
- Սրտային հիվանդություններ
- Արյան մակարդելիության խանգարումներ
- H. pylori առկայության դեպքում:

Ցանկալի չէ կիրառել այլ ոչ ստերոիդային հակաբորբոքային դեղամիջոցների հետ միասին:

## ԴԵՂԱՉԱՓՈՒՄ
Դեղաչափումը կախված է երեխայի տարիքից և մարմնի քաշից:
Իբուֆենի միանվագ դեղաչափը կազմում է 5-10մգ/կգ քաշին, օրական առավելագույն դեղաչափը կազմում է 30մգ/կգ քաշին: Իբուֆենը 24 ժամվա ընթացքում կարելի է տալ 3-4 անգամ: Դեղի ազդեցությունը պահպանվում է մինչև 8 ժամ:

| Տարիք | Միջին քաշը | Միանվագ դեղաչափը | Օրական առավելագույն դեղաչափը |
|---|---|---|---|
| 3-6 ամսական | | Բժշկի ցուցումով | |
| 6 ամսականից 1 տարեկան | 7 – 10 կգ | 2.5մլ (50մգ) | 200 մգ |
| 1-3 տարեկան | 10 – 16 կգ | 2.5 – 5մլ (50-100մգ) | 300 մգ |
| 4-6 տարեկան | 18 – 22 կգ | 7.5 մլ (150մգ) | 450 մգ |
| 7-9 տարեկան | 24 – 28 կգ | 10 մլ (200մգ) | 600 մգ |
| 10-12 տարեկան | 30 – 36 կգ | 15 մլ (300մգ) | 900 մգ |

- Որպես ցավազրկող կիրառել 5 օրից ոչ ավելի
- Որպես ջերմիջեցնող՝ 3 օրից ոչ ավելի

## ԳԵՐԴԵՂԱՉԱՓՈՒՄ
Եթե առաջացել է գերդեղաչափման խնդիր, ապա հրատապ դիմել բժշկի:
Գերդեղաչափման ախտանիշներն են՝ ցավեր որովայնում, սրտխառնոց, փսխում, գլխացավ, աղմուկ ականջներում, զարկերակային ճնշման իջեցում, բրադիկարդիա, տախիկարդիա:
Բուժումը՝ ստամոքսի լվացում (միայն ընդունելուց 1 ժամվա ընթացքում), ակտիվացված ածուխ, առատ հեղուկներ, ախտանիշների բուժում:

## ՓԱԹԵԹԱՎՈՐՈՒՄ
100 մլ 22իկ չափիչ բաժակով:

## ՊԱՀՊԱՆՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ
Պահպանել 25°C-ից ոչ բարձր ջերմաստիճանի պայմաններում:

## ՊԻՏԱՆԻՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ
3 տարի:

## ԲԱՑԹՈՂՄԱՆ ԿԱՐԳ
Առանց դեղատոմսի:

MEDICAL
Արտադրող՝ "Մեդիկալ Հորիզոն" ՍՊԸ
ՀՀ, Արարատի մարզ, ք. Մասիս
Մասիս Գայարան, Գործարանային 22

online-apteka.am

# IBUFENE

Instruction for Medicinal Use
(for patients)
IBUFENE
oral suspension, 100 ml

## TRADE NAME
IBUFENE

## REGISTRATION NUMBER
7803

INN

Ibuprofen

## COMPOSITION
Each 5ml contains active ingredients: 100 mg Ibuprofen, inactive ingredients: propylene glycol, methylparaben (E218), propylparaben (E216), sunset yellow (E110), orange flavour, sorbitol liquid, saccharose.

## DOSAGE FORM
Oral pediatric suspension with orange flavor.

## PARMACOLOGICAL GROUP
Nonsteroidal anti-inflammatory drugs

## ATC CODE
M01AE01

## PHARMACOLOGY
IBUFENE is a non-steroidal anti-inflammatory agent, with analgesic and antipyretic properties.

IBUFENE is immediately absorbed after 1-2 hours by its oral taking from the gastrointestinal tract and it is excreted rapidly from the urine. The medicine is effective until 8 hours.

## INDICATIONS
IBUFEN suspension is indicated for children from 6 month to 12 years, but for infants 3-6 month only after medical prescription, taking into account baby's weight over 5kg.

As antipyretic: acute respiratory diseases, flu, pediatric infections, post-vaccination period, and diseases which proceed with high temperature.

As analgesic: mild to moderate pain such as: dentation, headache, toothache, earache, throat ache, traumatic and post operative pains, neuralgia and migraine.

As anti-inflammatory: juvenile rheumatoid arthritis, osteoarthritis, bursitis, tendovaginit.

## CONTRAINDICATIONS
- infants above 3 month
- hypersensitivity to ibuprofen or other non-steroidal anti-inflammatory agents
- bronchial asthma, urticaria
- gastro-intestinal ulcer in children
- gastro-intestinal bleeding
- colon inflammation
- blood disease leucopenia, hemophilia
- liver or kidney insufficiency

## SIDE EFFECTS
Following side effects may occur during use of IBUFEN suspension
- Gastro-intestinal disorders. nausea, vomiting, loss of appetite, diarrhea, dyspeptic disorders, ulcer, rarely: gastro-intestinal bleeding
- Allergic reactions: skin rashes, itching, urticaria, exacerbation of bronchial asthma, bronchial spasm, anaphylaxis reactions, rarely: peripheral edema
- Cardio-vascular disorders. increasing of blood pressure, tachycardia
- Nervous system. dizziness, headache, irritability
- Blood system. neutropenia, thrombocytopenia, agranulocytosis, aplastic anemia

## DRUG INTERACTION
IBUFENE should not be taken in combination with Sulfamides, Lithium products and Methotrexate.

IBUFENE increases the plasma concentration of digoxin. IBUFENE reduces the effect of diuretics. Diuretics and ciclosporins increase nephrotoxic effect of non-steroidal anti-inflammatory drugs. IBUFENE increases side effects of mineralocorticosteroids and glucocorticosteroids.

IBUFENE increases the effect of coagulant taking by mouth and increases the effect of Heparin.

## PRECAUTIONS
It is recommended to consult a physician before using IBUFENE in case that a child has:
- urticaria in anamnesis
- bronchial asthma
- gastro-intestinal diseases
- blood content disorders
- arterial hypertension
- heart disease
- blood coagulation disorders
- H. pylori

It is not recommended to use IBUFEN suspension with other non-steroidal anti-inflammatory agents.

## DOSAGE AND ADMINISTRATION
Dosage depends on child's age and weight. Single dose of IBUFEN suspension varies between 5-10mg/kg per body weight, maximum daily dose is 30mg/kg per body weight. IBUFEN suspension can be given 3-4 times during 24 hours. The medicine is effective until 8 hours.

| Age | Average weight | Single dose | Maximum daily dose |
|---|---|---|---|
| 3-6 month | | by medical advise | |
| 6 month-1 year | 7 - 10 kg | 2.5ml (mg) | 200 mg |
| 1-3 year | 10 - 16 kg | 2.5 - 5ml (50-100mg) | 300 mg |
| 4-6 year | 18 - 22 kg | 7.5 ml (150mg) | 450 mg |
| 7-9 year | 24 - 28 kg | 10 ml (200mg) | 600 mg |
| 10-12 year | 30 - 36 kg | 15 ml (300mg) | 900 mg |

- It is not recommended to use IBUFEN suspension for more than 5 days as analgesic
- And for more than 3 days as antipyretic

## OVERDOSAGE
If symptoms of overdosage occur immediately consult a physician. Symptoms of overdosage are: abdominal pain, nausea, vomiting, headache, tinnitus, low blood pressure, bradycardia, and tachycardia.

Treatment: gastric lavage only through 1 hour after ingestion, activated coal, lot of liquids, and treatment of symptoms.

## PACKAGING
Bottle of 100 ml with measuring cup

## STORAGE
Store below 25°C.

## SHELF LIFE
3 years

## LEGAL STATUS
OTC drug

MEDICAL

MANUFACTURED BY MEDICAL HORIZON
RA, Ararat province. Masis city,
Masis Station, Gortsaranain 22

online-apteka.am